


ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՁԻ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿՈՁԸ



Պատերազմի աղէտներն սկսան օր օրի աւելի ցաւագին, սրտկեղ ու ահաւոր դառնալ. հազարաւորներ կ'իյնան պատերազմի դաշտին վրայ՝ մեռած կամ վիրաւոր: Մարդկային աւագ պարտականութիւն մ'է կարեկցութեան և օգնութեան ձեռք կարկառել բոլոր անոնց՝ որոնք մահուան հետ դէմ առ դէմ եկան և առոր իսկ հետեւանքով այսօր կարօտ ու միանգամայն արժանի եղան հանրային հոգածութեան:

Բոլոր քաղաքակիրթ աշխարհն օգնութեան փութաց այս դժբաղդներուն, առանց ցեղի ու կրօնի խտրութեան: Հայ ազգն ևս, որ իր ծոցէն հազարաւոր զինուորներ տուաւ որոնք այս պահուսկը գտնուին պատերազմի դաշտին վրայ, պարտաւոր էր հոգածու ըլլալ անոնց վիճակին և ջանալ իրովստն օժանդակել օգնութեան ընդհանուր գործին:

Ահա առոր համար կազմուեցաւ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՁԸ: Կարմիր խաչի նպատակն արդէն ծանօթ ըլլալով չենք ուզեր ծանրանալ անոր վրայ: Գիտենք նաեւ թէ վիրաւոր ու հիւանդ զինուորի մը համար, բժշկական դարմաններու և դեղերու չափ անզին է նաև այն մասնաւոր խնամքն ու հոգեկան սփոփանքն՝ որ իրեն կը մատուցուի իր ազգակցին կողմէ:

Հայ կարմիր խաչի մասնաւոր կարգադրութեամբ հայ բժիշկներու անձնուէր խումբ մը, հիւանդ ու վիրաւոր զինուորներն բժշկական դարմաններու և նիւթարկած պահուէն, զայն խնամելու և սփոփելու պիտի փութան Հայ կարմիր խաչի յատուկ հիւանդապահներն ու հիւանդապահուհիներն ինչպէս նաև Այցելու Տիկնանց Մասնախումբի անդամուհիներն:

Աւ մեր զինուորներուն մայրերն, քոյրերն ու կիներն թող վստահ ըլլան թէ գորգուրացող սրտեր ու խնամոտ ձեռքեր անպակաս պիտի ըլլան իրենց սիրելիներուն սնարին մօտ:

Հայ կարմիր խաչն, եթէ յառաջիկային իր միջոցներն ներեն, չպիտի մոռնայ նաեւ ողբացեալ Հայ զինուորներու այրիներն ու որբերն՝ որոնք հանրային գթութեան կարօտ պիտի մնան:

Հայ կարմիր խաչի կեդրոնական Գործադիր Ժողովը՝ հաստատուած Պետութենէն և ճանչցուած Ազգային Իշխանութիւններէն, դիմում կ'ընէ բոլոր մարդասէրներուն ընդհանրապէս և Օսմանեան երկրի ու արտասահմանի ազգային իշխանութեանց, Հայ բարեգործական ընկերութեանց, ազգայիններուն ու Մամուլին մասնաւորապէս, խնդրելով անոնց օժանդակութիւնը և ձեռնուրութիւնը՝ իր բազմապահանջ գործին համար:

Ենթահակութեամբ պիտի ընդունուին ողբան դրամական նուէրներն, նոյնքան ևս յարգելի բժիշկներու, վիրաբոյժներու, հիւանդապահներու գործակցութեան առաջարկներն, ինչպէս նաև դեղերու, վիրակապերու, ճերմակեղէններու և հիւանդներու սրտուէրք իրեղէններու նուիրատուութիւններն՝ որոնք օրն օրին պիտի ծանուցուին մամուլի միջոցաւ:

Դրամական նուէրներն պէտք է ուղղուին կեդր. Գործադիր Ժողովոյ Գանձապետ Տիար Վ. Յ. Սամուէլօֆի՝ իր անձնական հասցեով (Գայսէրի խան, Սիլվէհի, Կ. Պոլիս) և կամ շնորհիւ Հայ Պանքային (Գաթրոնօղլու խան, Կ. Պոլիս):

Անձնական աշխատանքի մատուցումներն և իրեղէններու նուէրներն կը ստացուին Հայ կարմիր խաչի կեդրոնական Գրասենեակն՝ Բերա, Թաքսիմի Հրապարակ Թիւ 8, ուր յատուկ տնօրէններ հաստատուած են առանց արձանագրութեանը համար:

Կեդրոնական Մարմինոյն կողմէ ընտրուած յատուկ Մասնախումբերու անդամներն՝ մասնաւոր արտօնագրեր ի ձեռին, պիտի դիմեն հանրութեան՝ նուիրահաւաքութեան համար:

Լիպոյոս ենք թէ Հայ ազգն՝ որ այնքան սիրալոթար կերպով օգնած է ազգային ամէն տեսակ աղէտներու առեւ, այս անգամ ալ, հակառակ տիրող տագնապին, պիտի փութայ նոր ճիգով մը դարման տանիլ ներկայ մեծ աղէտին:

Մնաւք Կանխապաշտ չեմք շնորհակալութեամբ՝

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՁԻ

Կեդրոնական Գործադիր Ժողովոյ

Նախագահ

ԵՂԵՆԷ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

Ատենադպիր

ՏՕՔՅ. Յ. ԱՐՔԻԵԱՆ

Ատենապետ

Ա. Պ. ՇԱԽՈՒԵԱՆ

29 Հոկտեմբեր, 1912

Բերա, Թաքսիմի հրապարակ, 8